

# AMCHAM



FOR A BETTER BUSINESS ENVIRONMENT | SPRING 2017

---



# TAX SYSTEM IN ARMENIA

# Solar Energy Production Financing



up to 1MW licensed plants

[www.ameribank.am](http://www.ameribank.am) | +374 10 561111



## AMCHAM BOARD OF DIRECTORS

**ARA HOVSEPYAN**  
President  
ContourGlobal  
Hydro Cascade CJSC

**NERSES NERSISYAN**  
1<sup>st</sup> Vice President  
KPMG Armenia CJSC

**GEORGI ISAYAN**  
2<sup>nd</sup> Vice President/  
Treasurer  
LTX-Credence Armenia LLC

**ARTHUR HOVANESIAN**  
Director  
Synergy International  
Systems

**ELINA MARKARYAN**  
Director  
Coca-Cola Hellenic Bottling  
Company Armenia CJSC

**KAREN GARASEFERYAN**  
Director  
Japan Tobacco International  
(JTI Armenia)

**TIGRAN GASPARYAN**  
Director  
KPMG Armenia CJSC

**GAGIK GYULBUDAGHYAN**  
Director  
Grant Thornton CJSC

**ASHOT GHAZARYAN**  
Director  
American University of  
Armenia

**DAVID SARGSYAN**  
Director  
Ameria Group of Companies

**HAYK ALOYAN**  
Director  
Lydian Armenia CJSC

**AHARON LEVONYAN**  
Director  
SI Holding

**RAPHAEL SAMBOU**  
Ex-Officio Member  
U.S. Embassy in Armenia

## EXECUTIVE OFFICE

**DIANA GHAZARYAN**  
Executive Director

**IRINA CHOBANYAN**  
Events and Business  
Development Lead

**TATEV VARDANYAN**  
Member Relations and  
Knowledge Sharing Lead

**VERA TADEVOSYAN**  
Digital Marketing and  
Communications Intern

**KRISTINA VARDANYAN**  
Chief Accountant

## ADDRESS

1 Amiryan Street,  
Armenia Marriott Hotel  
Yerevan 0010, RA

(+374 10) 599 187  
(+374 10) 587 651  
(+374 10) 560 772

(+374 55) 599 187

info@amcham.am  
amcham@arminco.am

www.amcham.am

http://www.facebook.  
com/AmChaminArmenia

## PUBLISHER

**AMERICAN CHAMBER OF  
COMMERCE IN ARMENIA**

The content of this  
publication must not be  
reproduced in full or in  
part without prior written  
permission of the publisher.

Journalist  
**NAIRI MURADYAN**

Designed by

**McCANN**  
YEREVAN

Printed by

**tparan.am**

## TABLE OF CONTENTS



### 4 EDITORIAL

### 5 INTERVIEW WITH AMCHAM PRESIDENT

### 8 AMCHAM NEW MEMBERS: AMCHAM WELCOMES ITS NEW MEMBERS

18 Optym Armenia: A Global Transportation Logistics Company  
Extends Their Reach in Armenia

22 Cascade People & Business: We Bring Change

### 24 MEMBER NEWS: BE INFORMED WITH AMCHAM

### FEATURED ARTICLES

32 New Tax Code as a Guarantee for Investment Attraction

34 Interview with Mr. Vakhtang Mirumyan, First Deputy Chairman  
of the RA State Revenue Committee

40 Single Treasury Account System

42 Transfer Pricing Settlements by the Tax Code of the RA: What  
Should You Know?

### ROAD TO SUCCESS

48 Interview with Mr. Hrachya Tokhmakhyan, Chief Executive  
Officer of Finca UCO CJSC (Armenia)

50 Interview with Mr. Ashot Chakhmouradian, Director and  
Co-Founder of FORA LLC

### DID YOU KNOW?

52 **CCHBC Armenia:** Interview with the Newly Appointed General  
Manager

54 **AUA:** 100 Pillars of AUA - The Foundation for a Stronger Armenia

56 **Hovhannisyan & Partners:** Appeal of Danish Investor Partly  
Satisfied - More Than 100 Million AMD Saved

58 **World Vision Armenia:** Armenia's Giving Culture - Turning  
Charity Into a Smart Business

62 **Habitat for Humanity Armenia:** Energy Talks - Energy Efficiency  
in Multi - Apartment Buildings in Armenia

### 66 AMCHAM MEMBERS



**ROUSTAM BADASYAN**  
Senior Associate, Attorney  
Concern Dialog Law firm

**ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ**  
Ավագ Իրավաբան,  
Փաստաբան  
Կոնցեռն Դիալոգ ընկերություն



# TRANSFER PRICING SETTLEMENTS BY THE TAX CODE OF THE REPUBLIC OF ARMENIA: WHAT YOU SHOULD KNOW?

A new mechanism of tax control has been introduced by the Tax Code of the Republic of Armenia, transfer pricing settlements (chapter 73 of the Code) which offers an alternative method to determine the taxable base of certain taxpayers on certain types of taxes by the tax body. The integrity of calculation and payment of profit tax, VAT, and royalty (as a nature utilization payment), as well as the compliance with the arm's length principle is being ascertained through this method.

## Tax Types towards which Transfer Pricing Settlements can be Applied

The present type of tax control is applicable towards the economic entities taxed exclusively with the following tax types and payment type:

- Profit Tax
- VAT
- Royalty (Nature Utilization Payment).

## Which Are the Controlled Transactions?

Controlled transactions are possible:

- Among residents;
- Between the residents and non-residents.

The transaction of the provision of goods between the residents, alienation of intangible assets, execution of works and/or provision of services shall be considered controlled provided that at the same time the following conditions are met:

- Resident taxpayers are interrelated;
- One of the resident taxpayers is either (1) a royalty payer and (or) (2) benefits from the tax privileges of profit

tax, VAT, and (or) royalty, and (or) (3) is an exploiter of free economic zone.

The transaction of the provision of goods between the resident and the non-resident, alienation of intangible assets, execution of works and/or provision of services shall be considered controlled provided that one of the following conditions is available:

- The resident and the non-resident are interrelated;
- The transaction party with the resident is registered in an offshore country.

Interrelated are considered: Two or more taxpayers are considered interrelated if one of the following conditions is available:

- One of the taxpayers, directly or indirectly participates in the management, control of the other taxpayer or has participation (stock, shares) in the other's charter or share capital;
- The same taxpayer, directly or indirectly, participates in the management, control of two or more

taxpayers or has participation (stock, shares) in the other's charter or share capital.

## When Are The Transfer Pricing Settlements Applied towards the Controlled Transactions?

Transfer pricing settlements are applied when the total price of all the controlled transactions done by the taxpayer during the fiscal year exceeds 200 million AMD.

## What Is "Transfer Pricing Settlement"?

The profit tax base, of controlled transactions, VAT base and royalty base, shall be defined based on arm's length principle, i.e. they shall be based on such prices and financial indicators that do not differ from those conditions that would have been applied in the comparable non-controlled transactions. In other words, in the controlled transaction (for instance, provision of goods between resident and non-resident interrelated persons) the price will match with the arm's length principle if it does not differ from

# ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՆԱԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՎ. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ

ՀՀ հարկային օրենսգրքով որոշ հարկատուների նկատմամբ ներդրվել է հարկային հսկողության նոր մեխանիզմ՝ տրանսֆերային գնագոյացման կարգավորումներ (Օրենսգրքի 73-րդ գլուխ), որը ենթադրում է հարկային մարմնի կողմից որոշ հարկատեսակների մասով հարկման բազան որոշելու այլընտրանքային եղանակ: Դրա միջոցով պարզվում է շահութահարկի, ԱԱՀ-ի և բնօգտագործման վճար հանդիսացող ռայալթիի հաշվարկման և վճարման ամբողջականությունը, ինչպես նաև պարզված ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը:

## Նարկատեսակները, որոնց նկատմամբ կարող են կիրառվել տրանսֆերային գնագոյացման կարգավորումները:

Հարկային հսկողության տվյալ տեսակը կիրառելի է բացառապես հետևյալ հարկատեսակներով և վճարատեսակով հարկվող տնտեսվարողների նկատմամբ՝

- Շահութահարկ
- ԱԱՀ
- Բնօգտագործման վճարի տեսակ հանդիսացող ռայալթի

## Որոնք են համարվում վերահսկվող գործարքները:

Վերահսկվող գործարքները հնարավոր են՝

- Ռեզիդենտների միջև
- Ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև

Ռեզիդենտների միջև ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքը կհամարվի վերահսկվող, եթե միաժամանակ առկա են հետևյալ պայմանները՝

- Ռեզիդենտ հարկ վճարողները փոխկապակցված են

• Ռեզիդենտ հարկ վճարողներից մեկը հանդիսանում է կամ (1) ռայալթի վճարող և (կամ) (2) օգտվում է շահութահարկի ԱԱՀ-ի և (կամ) ռայալթիի գծով սահմանված հարկային արտոնություններից, և (կամ) (3) ազատ տնտեսական գոտու շահագործող է:

Ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքը կհամարվի վերահսկվող, եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

- Ռեզիդենտը և ոչ ռեզիդենտը փոխկապակցված են,
- Ռեզիդենտի հետ գործարքի կողմը գրանցված է օջորային երկրում:

Փոխկապակցված են համարվում երկու և ավելի հարկ վճարողներ համարվում են փոխկապակցված, եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

- հարկ վճարողներից մեկը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս հարկ վճարողի կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժ-

նեմաս, փայաբաժին) ունի մյուսի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում.

• միևնույն հարկ վճարողն ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է երկու և ավելի հարկ վճարողների կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) ունի դրանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում:

## Երբ են կիրառվում տրանսֆերային գնագոյացման կարգավորումները վերահսկվող գործարքների նկատմամբ:

Տրանսֆերային գնագոյացման կարգավորումները կիրառվում են, եթե հարկ վճարողի՝ հարկային տարվա ընթացքում իրականացրած բոլոր վերահսկվող գործարքների հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը:

## Ինչ է իրենից ներկայացնում «Տրանսֆերային գնագոյացման կարգավորումները»:

Վերահսկվող գործարքների մասով շահութահարկի բազան, ԱԱՀ բազան և ռայալթիի բազան պետք է որոշվեն պարզված ձեռքի հեռավորութ-

the price of the transaction signed between non-interrelated resident and non-resident (if the price of the goods, in case of non-interrelated non-resident, has been 100 units, it shall not differ from the price of the transaction signed with the interrelated person, too).

In compliance with the Code, the controlled and non-controlled transactions shall be comparable. For instance, in the case of goods – physical characteristics, quality, availability in the market, volume, in the case of services – its character, applied technical skills, knowledge, and so on. The Code has

**“THE PROBLEM LIES IN THE FACT THAT THE TAXPAYER WILL OFTEN ACT WITH “EYES CLOSED” SINCE THE NECESSARY INFORMATION TO ADJUST THE BASE MAY BE UNAVAILABLE.”**

foreseen diverse tools and criteria for comparability decision. It has also been foreseen the opportunity to perform comparability adjustment, which means that between the controlled and non-controlled transactions there shall be eliminated such differences which have been generated as a consequence of different accounting policies, differences that are due to the launched capital, assets used, risks incurred, the differences that are due to the peculiarities of the geographical markets.

There are also internal and external uncontrolled transactions. The internal uncontrolled transaction is a transaction executed between one of the parties of the transaction considered controlled and the taxpayers considered non-interrelated; the external is a transaction executed between the taxpayers not considered interrelated, no one of the parties of which is considered a party of controlled transaction. If the internal

and external uncontrolled transactions can be considered comparable with equal reliability, then the preference should be given to the first.

The transfer pricing methods are:

- The comparable uncontrolled price method, in case of which the object price of the controlled transaction is compared with the object price of comparable uncontrolled transaction;
  - The resale price method in case of which the extra price received from the resale of the object of controlled transaction is compared with the extra price received from the resale of the object of comparable uncontrolled transaction;
  - The “expense” method, in case of which the extra price applied towards the direct and indirect expenses done during the provision of the object of the controlled transaction is compared with the extra price applied towards the direct and indirect expenses done during the provision of the object of comparable uncontrolled transaction;
  - Net profit method in which the net profit received from the controlled transaction towards the corresponding base, in particular, expenses, sales, assets, is compared with the net profit received from the comparable uncontrolled transaction towards the same base;
  - Profit distribution method in which each of the interrelated taxpayers participating in the controlled transaction receives the part of the profit or loss generated from that transaction, which the person not considered interrelated could expect while participating in the comparable uncontrolled transaction. Within the meaning of the present point, profit received from the transaction is considered the positive difference of the profit received from that transaction and the expenses related to that transaction.
- The selection of the method is related to the characteristics of the specific transaction.
- Consequences of Transaction Incompliance to the Arm’s Length Principle**
- The incompliance consequences are foreseen by the Part 3 of the Article 364 of the Code:
- Any additional amount of income

tax base or any reduction in tax loss (hereinafter in this Chapter, the base of the profit tax), which could occur to the taxpayer, if the controlled transaction conditions would have matched with the arm’s length principle; however, it has not been occurred as a result of incompliance with the arm’s length principle of the controlled transaction conditions, it is included in the taxpayer’s income tax base by the tax authority.

Example,

- The company A is a royalty payer resident and provides metal concentrate to the interrelated non-resident (controlled transaction) on November, 2016,
  - The company A, at the same time, provides metal concentrate of the same type and characters to the non-interrelated non-resident (internal uncontrolled transaction) on December, 2016,
  - The price of internal uncontrolled transaction is 100,000,000 AMD, the price of controlled transaction is 70,000,000 AMD,
  - In the case of internal uncontrolled transaction, the hazardous elements in the metal concentrate (for instance, humidity indicators) are less than in case of controlled transaction. That difference by monetary manifestation is 10,000,000 AMD,
  - In case of internal uncontrolled transaction it is necessary to carry out additional transportation expenses in the amount of 5,000,000 AMD.
- Therefore,
- The objects of controlled and internal uncontrolled transactions are comparable such as the issue is about the same metal concentrate,
  - It is necessary to perform comparability adjustment, particularly, take into account that in case of internal uncontrolled transaction the hazardous elements are more, and the transportation costs are in the amount of 15,000,000 AMD,
  - It is found out that the controlled transaction does not comply with the open arm’s length principle in the amount of 15,000,000 AMD (100,000,000 (internal uncontrolled transaction price) – 70,000,000 (controlled transaction price) – 15,000,000 (comparability adjustments)).

յան սկզբունքի հիման վրա, այսինքն պետք է հիմնված լինեն այնպիսի գների և ֆինանսական ցուցանիշների վրա, որոնք չեն տարբերվում այն պայմաններից, որոնք կկիրառվեն համադրելի չվերահսկվող գործարքներում: Այլ բառերով ասված, վերահսկվող գործարքում (օրինակ՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ փոխկապակցված անձանց միջև ապրանքի մատակարարում) գինը կհամապատասխանի պարզված ձեռքի հեռավորության սկզբունքին, եթե այն չտարբերվի չփոխկապակցված ռեզիդենտ և ոչ ռեզիդենտի միջև կնքված գործարքի գնից (եթե ապրանքի գինը չփոխկապակցված ոչ ռեզիդենտի դեպքում կազմել է 100 միավոր, ապա այն չպետք է տարբերվի նաև փոխկապակցված անձի հետ կնքված գործարքի գնից):

Օրենսգրքի կարգավորման համաձայն՝ վերահսկվող և չվերահսկվող գործարքները պետք է լինեն համադրելի: Օրինակ՝ ապրանքի դեպքում՝ ֆիզիկական հատկանիշներ, որակ, շուկայում առկայություն, ծավալ, ծառայության դեպքում՝ դրա բնույթը, օգտագործված տեխնիկական գիտելիքներ ու հմտություններ և այլն: Օրենսգրքը նախատեսել է համադրելիության չորշման բազմապիսի գործիքներ և չափանիշներ: Նախատեսված է նաև համադրելիության ճշգրտում կատարելու հնարավորությունը, ինչը նշանակում է, որ պետք է վերացվեն վերահսկվող և չվերահսկվող գործարքների միջև այնպիսի տարբերությունները, որոնք առաջացել են հաշվապահական տարբեր քաղաքականությունների կիրառության հետևանքով, տարբերությունները, որոնք պայմանավորված են գործարկված կապիտալով, օգտագործված ակտիվներով, կրած ռիսկերով, տարբերությունները, որոնք պայմանավորված են աշխարհագրական շուկաների առանձնահատկություններով:

Տարբերակվում են նաև ներքին և արտաքին չվերահսկվող գործարքները: Ներքին չվերահսկվող գործարքները վերահսկվող համարվող գործարքի կողմերից մեկի և փոխկապակցված չհամարվող հարկ վճարողների միջև իրականացված գործարքն է, արտաքինը՝ փոխկապակցված չհամարվող հարկ վճարողների միջև իրականացված գործարք, որի կողմերից ոչ մեկը չի հանդիսանում վերահսկվող գործարքի կողմ: Եթե հավասար արժանահավատությամբ կարող են

համադրելի համարվել ներքին և արտաքին չվերահսկվող գործարքները, ապա նախապատվությունը պետք է տրվի առաջինին:

Տրանսֆերային գնագոյացման մեթոդներն են՝

1. Նամադրելի չվերահսկվող գնի մեթոդը, որի դեպքում վերահսկվող գործարքի առարկայի գինը համեմատվում է համադրելի չվերահսկվող գործարքի առարկայի գնի հետ
  2. Վերավաճառքի գնի մեթոդը, որի դեպքում վերահսկվող գործարքի առարկայի վերավաճառքից ստացված հավելագինը համեմատվում է համադրելի չվերահսկվող գործարքի առարկայի վերավաճառքից ստացված հավելագնի հետ
  3. «Ծախսումներ գումարած» մեթոդը, որի դեպքում վերահսկվող գործարքի առարկայի մատակարարման ընթացքում կատարված ուղղակի և անուղղակի ծախսերի նկատմամբ կիրառված հավելագինը համեմատվում է համադրելի չվերահսկվող գործարքի առարկայի մատակարարման ընթացքում կատարված ուղղակի և անուղղակի ծախսերի նկատմամբ կիրառված հավելագնի հետ
  4. Ջուտ շահույթի մեթոդ, որի դեպքում վերահսկվող գործարքի արդյունքում համապատասխան բազայի, մասնավորապես, ծախսումների, իրացումների, ակտիվների նկատմամբ ստացված զուտ շահույթը համեմատվում է համադրելի չվերահսկվող գործարքի արդյունքում միևնույն բազայի նկատմամբ ստացված զուտ շահույթի հետ
  5. Շահույթի բաշխման մեթոդ, որի դեպքում վերահսկվող գործարքին մասնակցող փոխկապակցված հարկ վճարողներից յուրաքանչյուրին հատկացվում է տվյալ գործարքից ստացված շահույթի կամ վնասի այն մասնաբաժինը, որը փոխկապակցված չհամարվող անձը կարող էր ակնկալել համադրելի չվերահսկվող գործարքին մասնակցելիս: Սույն կետի կիրառության իմաստով՝ գործարքից ստացվող շահույթ է համարվում այդ գործարքի գծով ստացվող եկամտի և դրա գծով ծախսերի դրական տարբերությունը:
- Մեթոդի ընտրությունը պայմանավորված է կոնկրետ գործարքի առանձնահատկություններով:
- Պարզված ձեռքի հեռավորության սկզբունքին գործարքի անհամապատասխանության հետևանքները**

Անհամապատասխանության հետևանքները նախատեսված են Օրենսգրքի 364-րդ հոդվածի 3-րդ մասում՝

- Շահութահարկով հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար կամ հարկային վնասի ցանկացած նվազեցում (այսուհետ սույն գլխում՝ շահութահարկի հարկման բազա), որը կարող էր առաջանալ հարկ վճարողի մոտ, եթե վերահսկվող գործարքի պայմանները համապատասխանեին պարզված ձեռքի հեռավորության սկզբունքին, սակայն չի առաջացել վերահսկվող գործարքի պայմանների՝ պարզված ձեռքի հեռավորության սկզբունքին անհամապատասխանության պատճառով, հարկային մարմնի կողմից ներառվում է հարկ վճարողի շահութահարկով հարկման բազայի մեջ: ԱԱՀ և ռոյալթի մասով սահմանված է նույնանման կարգավորում:
- Օրինակ՝
- A ընկերությունը ռոյալթի վճարող ռեզիդենտ է և մետաղի խտանյութ է մատակարարում փոխկապակցված ոչ ռեզիդենտին (վերահսկվող գործարք) 2016 թվականի նոյեմբեր ամսին
- A ընկերությունը, միաժամանակ, միևնույն տեսակի և հատկանիշներ մետաղի խտանյութ է մատակարարում փոխկապակցված ոչ ռեզիդենտին (ներքին չվերահսկվող գործարք) 2016 թվականի դեկտեմբեր ամսին
- Ներքին չվերահսկվող գործարքի գինը կազմում է 100,000,000 դրամ, վերահսկվող գործարքի գինը կազմում է 70,000,000 դրամ,
- Ներքին չվերահսկվող գործարքի դեպքում մետաղի խտանյութում վընասակար տարրերը (օրինակ՝ խոնավության ցուցանիշները) ավելի նվազ են, քան վերահսկվող գործարքի դեպքում: Այդ տարբերությունը դրամական արտահայտությամբ կազմում է 10,000,000 դրամ
- Ներքին չվերահսկվող գործարքի դեպքում անհրաժեշտ է կատարել լրացուցիչ տրանսպորտային ծախսեր 5,000,000 դրամի չափով:
- Այսպիսով՝
- Վերահսկվող և ներքին չվերահսկվող գործարքների առարկաները համադրելի են, քանի որ խոսք է գնում միևնույն մետաղի խտանյութի մասին
- Անհրաժեշտ է կատարել համադրելիության ճշգրտում, մասնավորապես, հաշվի առնել, որ ներքին չվերահսկվող գործարքի պարագայում ավելի շատ են վնասակար տարրերը և տրանսպորտային ծախսերը 15,000,000 դրամի չափով

**Notification and Documentation Duties**

During the tax year, in case of exceeding the limit of the controlled transactions (200 mln AMD) the taxpayer shall present a notification before the 20th of April of the year following the tax year, which, in addition to other terms, shall contain information about the transfer pricing methods applied with the objective to decide the compliance of the controlled transactions conditions with the arm's length principle, including the specific weight of the applied transfer pricing methods in the controlled transactions.

That is to say, the taxpayer is free to make a decision about the transaction conditions, but in case of not complying with their arm's length principle he/she shall apply transfer pricing methods with the objective to decide the tax base by the procedure defined by law.

The taxpayer also has transfer pricing documentation duty, during 30 working days after receiving the notification from the tax body he/she shall present documents which shall evidence about the compliance of the transaction with the arm's length principle (information used, method applied, and its foundation, etc.).

**Compliance Adjustments in the Scope of International Covenants Excluding Double Taxation**

It is possible that a necessity may arise to define the compliance of the transaction to the arm's length principle also in the scope of international covenants excluding the double taxation.

In accordance with the Code, the comparability adjustments are done when:

- The adjustment of the conditions of controlled transaction, one of the parties of which is a resident taxpayer, has been performed or it is proposed by the tax body of another country,
- The adjustment results in such profit taxation in another country for which the resident taxpayer has already paid in the Republic of Armenia,
- The Republic of Armenia has a certified international covenant about excluding the double taxation with the country making or proposing the

adjustment.

Such regulations are assigned to exclude partially declared cases of taxation base in the scope of double taxation exclusion.

In case when, according to the certified international covenant about the exclusion of double taxation, the resident company or the resident physical person is informed that the controlled transaction taxation

***“A NUMBER OF PROCEDURAL ISSUES ARE NOT CLEAR YET, SPECIFICALLY HOW THE ADJUSTMENT WOULD BE INCLUDED IN THE TAXATION BASE, IN THE SCOPE OF TAX CHECK, OR IT IS ALSO POSSIBLE WITHIN THE FRAMEWORK OF OTHER ADMINISTRATIVE PROCEEDINGS.”***

caused as a result of the activities of the resident partner of the country considered a party of the international covenant about the exclusion of double taxation may not comply with the provisions of the certified international covenant on the exclusion of the double taxation, the resident company or the resident physical person may present a request to the tax body and solicit to solve the issue through mutual agreement procedure.

The mutual agreement procedure is integrity of means foreseen by the international covenant through which the authorized bodies of the contracting states, by mutual agreement, try to solve all kinds of difficulties and conflicts that may arise during the interpretation or application of the contract. In cases not provided by the contract, they may consult to exclude the double taxation.

Summarizing the above, it appears that the taxpayer has an obligation, in cases of controlled transactions, match them to the arm's length principles, to adjust the income tax, VAT or royalty taxation bases. In case of incompliance, the taxation body has the opportunity to independently adjust the taxation

bases. The problem lies in the fact that the taxpayer will often act with “eyes closed” since the necessary information to adjust the base may be unavailable (may be considered a tax or commercial secret). In case of adjustment by the taxation body, a number of procedural issues are not clear yet, specifically how the adjustment would be included in the taxation base, in the scope of tax check, or it is also possible within the

framework of other administrative proceedings. It is already natural that while using the transfer pricing methods we deal with different economic concepts and calculations which will cause many conflicts, and in case of disagreements as a result of the interpretation of the Tax Code, they should be interpreted in favor of the taxpayer.

Thus, under the conditions of increasing strict tax administration, in the contracts signed between the economic entities, not only civil law consequences shall be evaluated (risks that are associated with the contractor), but more frequently the administrative consequences shall be evaluated (possible problems or issues arising in relations with the tax authorities or in the sphere of economic competition). Meanwhile, in the relationship with the tax authorities the above said refers to not only the transfer pricing, but also to such contract provisions which are common, that later on may cause problems related to withdrawal of bad debts or other issues.

- Ստացվում է, որ վերահսկվող գործարքը չի համապատասխանում բաց ձեռքի հեռավորության սկզբունքին 15,000,000 դրամի չափով (100,000,000 (Ներքին չվերահսկվող գործարքի գին) - 70,000,000 (վերահսկվող գործարքի գին) - 15,000,000 (համադրելիության ճշգրտումներ)):

**Ծանուցման և փաստաթղթավորման պարտականություն**

Հարկային տարվա ընթացքում վերահսկվող գործարքների շեմը (200 մլն. դրամ) գերազանցելու դեպքում հարկ վճարողը պարտավոր է մինչև հարկային տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներկայացնել ծանուցում, որտեղ, ի թիվս այլ պայմանների, պետք է պարունակի տեղեկատվություն՝ վերահսկվող գործարքների պայմանների պարզած ձևով հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելու նպատակով կիրառված տրանսֆերային գնագոյացման մեթոդների մասին, այդ թվում՝ կիրառված տրանսֆերային գնագոյացման մեթոդների տեսակարար կշիռը վերահսկվող գործարքներում:

Այսինքն, հարկ վճարողը ազատ է գործարքի պայմանները որոշելու հարցում, սակայն դրանց պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին չհամապատասխանելու դեպքում պարտավոր է ինքնուրույն կիրառել տրանսֆերային գնագոյացման մեթոդներ հարկման բազան օրենքով սահմանված կարգով որոշելու նպատակով:

Հարկ վճարողը ունի նաև տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման պարտականություն, հարկային մարմնի ծանուցումը ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնի փաստաթղթեր, որոնք վկայում են գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության մասին (օգտագործված տեղեկատվություն, կիրառված մեթոդ և դրա հիմնավորում և այլն):

**Կրկնակի հարկումը բացառող միջազգային պայմանագրերի շրջանակներում համապատասխանության ճշգրտումները**

Գործարքի՝ պարզված ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելու անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև կրկնակի հարկումը բացառող միջազգային պայմանագրերի շրջանակներում:

Օրենսգրքի համաձայն՝ համապատասխանության ճշգրտումները կատարվում են, երբ՝

1. վերահսկվող գործարքի պայմանների ճշգրտումը, որի կողմերից մեկը հանդիսանում է ռեզիդենտ հարկ վճարող, կատարվել է կամ առաջարկվում է մեկ այլ երկրի հարկային մարմնի կողմից:

2. ճշգրտումը հանգեցնում է այնպիսի եկամտի հարկման մեկ այլ երկրում, որի համար ռեզիդենտ հարկ վճարողը արդեն իսկ հարկ է վճարել Հայաստանի Հանրապետությունում:

3. ճշգրտումը կատարող կամ առաջարկող երկրի հետ Հայաստանի Հանրապետությունն ունի կրկնակի հարկումը բացառելու մասին վավերացված միջազգային պայմանագիր:

Նման կարգավորումները կոչված են բացառելու հարկման բազայի թերհայտարարագրման դեպքերը կրկնակի հարման բացառման շրջանակներում:

Այն դեպքում, երբ կրկնակի հարկումը բացառելու մասին վավերացված միջազգային պայմանագրի համաձայն, ռեզիդենտ կազմակերպությունը կամ ռեզիդենտ ֆիզիկական անձը տեղեկանում է, որ հարկային մարմնի կամ կրկնակի հարկումը բացառելու մասին միջազգային պայմանագրի կողմ համարվող երկրի ռեզիդենտ գործընկերոջ գործողությունների արդյունքում վերահսկվող գործարքի հարկումը կարող է չհամապատասխանել համապատասխան կրկնակի հարկումը բացառելու մասին վավերացված միջազգային պայմանագրի դրույթներին, ապա ռեզիդենտ կազմակերպությունը կամ ռեզիդենտ ֆիզիկական անձը կարող է դիմում ներկայացնել հարկային մարմնի և խնդրել, որ գործը լուծվի փոխհամաձայնեցման ընթացակարգի միջոցով:

Փոխհամաձայնեցման ընթացակարգը միջազգային պայմանագրով նախատեսված միջոցների ամբողջություն է, որի միջոցով պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնություններ ձգտում են լուծել բոլոր դժվարություններն ու հակասությունները, որոնք կարող են առաջանալ պայմանագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են նաև պայմանագրով չնախատեսված դեպքերում խորհրդակցել կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

Ամփոփելով վերոգրյալը, ստացվում է, որ հարկ վճարողը ունի պարտականություն վերահսկվող գործարքների դեպքում դրանք համապատասխանեցնել պարզված ձեռքի հեռավորության սկզբունքներին, ճշգրտելու շահութահարկի, ԱԱՀ-ի կամ ռոյալթիի հարկման բազաները: Անհամապատասխանության դեպքում հարկային մարմինը հնարավորություն ունի ինքնուրույն ճշգրտելու բազաները: Խնդիրը կայանում է նրանում, որ հարկ վճարողը հաճախ գործելու է «փակ աչքերով», քանի որ բազան ճշգրտելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը կարող է լինել անհասանելի (համարվի հարկային կամ առևտրային գաղտնիք): Հարկային մարմնի կողմից ճշգրտման դեպքում էլ, այդքան էլ պարզ չեն մի շարք ընթացակարգային հարցեր, կոնկրետ ինչպես է ճշգրտումը ներառվելու հարկման բազայում՝ ստուգումների շրջանակներում, թե դա հնարավոր է նաև այլ վարչական վարույթի շրջանակներում: Արդեն իսկ բնական է, որ տրանսֆերային գնագոյացման մեթոդները կիրառելիս գործ ունենք բազմաթիվ տնտեսագիտական հասկացությունների և հաշվարկների հետ, որը բազմաթիվ վեճերի առիթ է ստեղծելու, իսկ Հարկային օրենսգրքի մեկնաբանության արդյունքում տարակարծություններ առաջանալու դեպքում, դրանք պետք է մեկնաբանվեն հօգուտ հարկ վճարողի:

Այսպիսով, գնալով ավելի խստացվող հարկային վարչարարության պայմաններում, տնտեսվարողների միջև կնքվող պայմանագրերում պետք է գնահատվեն ոչ միայն քաղաքացիաիրավական հետևանքները (ոխսկեր, որոնք կապված են կոնտրադենտի հետ) այլև ավելի հաճախ գնահատվեն վարչաիրավական հետևանքները (հարկային մարմնի հետ առաջացող հնարավոր խնդիրները կամ տնտեսական մրցակցության ոլորտում առաջացող խնդիրները): Ընդ որում, հարկային մարմնի հետ փոխհարաբերություններում ասվածը վերաբերում է ոչ միայն տրանսֆերային գնագոյացմանը, այլ նաև պրակտիկայում հաճախ հանդիպող պայմանագրային այնպիսի դրույթներին, որոնք հետագայում կարող են խնդիր առաջացնել անհուսալի դեբիտորական կամ կրեդիտորական գումարների դուրս գրման և մի շարք այլ հարցերի հետ կապված: